Արձանագրություն N 3
Շինարարական նյութերի ձեքբերման
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/104 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.06.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հայրապետյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մարգարյան /գնահատող/, Է. Հարոյան /գնահատող/
Հ. Դավթյան /բացող/, Ա. Տեր-Թորոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/104» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Ա. Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/104» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է Սեմուր ընդ Կո ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ համապատասխան լիազորագրով:

Բանակցությունների անցկացման համար սահմանվել է հինգ րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ, որը չի գերազանցում գնման առարկայի նախահաշվային արժեքը /հավելվածը կցվում է/:

Չափ. անվանումը	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ		ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	
	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1. Ցինկապատ թիթեղ 1.0 x 2.0 մ չափի, 0.5 մմ հաստությամբ	802916.66	963500	750000	900000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Հայրապետյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/104» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Սեմուր ընդ Կո ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

3. Ընթացակարգը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Հայրապետյան)

3.1 Հաշվի առնելով, որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով գերազանցել է գնման առարկաների նախահաշվային

արժեքները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

3.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Հայրապետյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Հայրապետյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Հայրապետյան

Անդամներ՝ ---------- Հ. Դավթյան

---------- Ա. Տեր-Թորոսյան

---------- Վ. Մարգարյան

---------- Է. Հարոյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան